«Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ
0014 Հայաստան, Երևան, Աղոնցի 10Բ,
Հեռ. 24 50 99; ֆաքս՝ 24 51 99

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն բաց ընթացակարգը հայտարարվում է համաձայն "ՄԷԿ" ՓԲԸ ԿԳՄ 2014 թվականի մարտի 31-ի և ապրիլի 10-ի նիստերի որոշման և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն

Պատվիրատուն՝«Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ, որի հասցեն է Հայաստանի Հանրապետություն, 0014 ք. Երևան, Աղոնցի 10Բ, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Բաց մեկ փուլից կազմված, առանց նախնական ընտրության մրցույթի ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին՝ սահմանված կարգով կառաջարկվի կնքել պայմանագիր ""ՄԷԿ" ՓԲԸ աշխատակիցների կամավոր բժշկական ապահովագրության" վերաբերյալ: Ծառայությունների սկիզբը – պայմանագրի կնքման ամսաթիվը, ծառայությունների ավարտը - պայմանագրի գործողության մոտավոր ավարտն է 2015 թ. հուլիսի 1-ը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անձինք:

Մասնակիցները պետք է բավարարեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված որակավորման չափանիշների պահանջները; ընտրված մասնակցին որոշելու համար կկիրառվի հայտերի բացման և գնահատման մասին «Գնումների մասին» ՀՀ օրենքով և "ՄԷԿ" ՓԲԸ կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին Կանոնադրությունով սահմանված կարգը:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Մրցութային փաթեթը հայերեն /ռուսերեն լեզվով ստանալու համար, անհրաժեշտ է 40 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հայտարարությունը հրապարակելու պահից գրավոր դիմել պատվիրատուին վերջինիս հասցեով՝ Մրցութային գնումների դեպարտամենտ, սենյակ 201, վճարելով 100 000 ՀՀԴ "Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ դրամարկղ կամ հաշվեհամարին ՀՎՀՀ-00078569, "Ամերիաբանկ" ՓԲԸ Հ/Հ – 1570012654440100;

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև *2014 թ. մայիսի 19-ի ժամը 16:00, "Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ / Հայաստանի Հանրապետություն, 0014, ք.Երևան, փող. Աղոնցի 10 Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e-mail՝* office@mek.am;

Հայտերը բացվում են Ընկերության ԿԳՄ նիստին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին հաջորդող օրը՝ *2014 թվականի մայիսի 20-ին ժամը 10:00-ին:*

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին՝ համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Բարսեղյանին, 010 24 50 99 հեռախոսահամարով:

Գլխավոր տնօրեն՝ Ա.Գրիգորյան